

ԼՈՒԻԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ ԻՍԱԿՆԵՐԻ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԵՐԸ ԲԱՌԱԻՍԱՍՏԱՅԻՆ
ԱՅԼ ԽԱՐԵՐՈՒՄ

Շնորհիվ իր հաղորդակցական լայն նշանակության՝ լուրջում հասկացությունը դարձել է լեզվաբանների ուսումնասիրության առարկա (Н.Д. Арутюнова, Г.Г. Почепцов, В.В. Богданов, С. В. Крестинский և այլն): Օրինակ՝ Բոգդանովը կարծում է, որ լուրջում կարող է "նշանակել խոսողի՝ անհրաժեշտ տեղեկատվությունը հայտնել չցանկանալը" [2, էջ 22 - 23]: Կրեստինսկին փորձում է պարզել լուրջան պատճառները և իմաստը *դադար* և *լուրջում* բառային միավորների վերլուծության միջոցով [4, էջ 3]: Իսկ Ալեքսանդրովան իր "Խոսք լուրջան մասին" հոդվածում ձևակերպում է լուրջումը՝ որպես կրոնական միտք և կրոնական գագաթնույթ: "Աստծուն տեսնելու, Սուրբ Խոսքը լսելու և հոգևոր գեղեցկությունը հասկանալու համար անհրաժեշտ է լուրջումը: Լուրջումը հաղթանակ է ինքը քո հանդեպ" [1, էջ 72]: Նա այդ ամենին ավելացնելով՝ նշում է նաև, որ լուրջումը արվեստի մախապայման է:

Հանգիստ հասկացությունը նույնպես գտնվում է բանասերների, փիլիսոփաների և հատկապես հոգևորականների ուշադրության կենտրոնում: Նրանց հետաքրքրությունները հատվում են տեքստի խորքում: Ինչպես նշում է Կատելնիկովը, *հանգիստ* բառի բոլոր իմաստներն ու նրբերանգները ստեղծում են մի իմաստաբանական ծառ, որի գագաթն ընդգրկում է կրոնի և փիլիսոփայության բնագավառները: "Այս բառն իր "վերին շերտի" իմաստները ձեռք է բերել բավական վաղ՝ դեռևս Աստվածաշունչը թարգմանելիս: Եվ դրանից հետո այն փոխանցվել է գրականության տարբեր ժանրերին: Բայց դրանից, բառի իմաստաբանական ձևը չի փոխվել" [3, էջ 4]:

"By the seventh day God had finished the work he had been doing; so on the seventh day he rested from all his work. And God blessed the seventh day and made it holy, because on it he rested from all the work of creating that he had done." [8]

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հանգիստը Աստծու համար իր ստեղծածի, իր ավարտուն գործի դիտումն է: Այսինքն՝ Աշխարհի ստեղծումը նյութական երևույթ է, իսկ հանգիստը՝ հոգևոր: Կատելնիկովը նշում է նաև, որ *հանգիստ* բառը սլավոնական այբուբենում եղել է տառի անվանում, իսկ ինչպես հայտնի է, այբուբենի տառերի անվանումները ազգի աշխարհընկալման համար կարևոր հասկացություններ էին [3, էջ 4-5]:

Այսպիսով, ակնհայտ է, որ *լուրջում* և *հանգիստ* հասկացություններն ուսումնասիրվել են տարբեր տեսանկյուններից, բայց անհրաժեշտ է նշել նաև,

որ դեռևս չի ուսումնասիրված նրանց իմաստային դաշտի ստորակարգային դասակարգումն անգլերենում: Սույն հոդվածի նպատակն է կատարել անգլերենի լռություն և հանգիստ ցույց տվող ոչ խնդրառական բայերի իմաստային խմբի դասակարգումը և վերլուծել, թե ինչպես են լռություն և հանգիստ հասկացությունների իմակներն ազդում բառաիմաստային այլ խմբերի բայերի վրա:

Արդի լեզվաբանության կարևոր խնդիրներից մեկը բառային կազմի համակարգային հարաբերությունների պարզաբանումն է: Այդ համակարգայնությունը դրսևորվում է հարացուցային և շարակարգային մակարդակներում: Այդ հարաբերություններն իրենց ավելի լիարժեք արտահայտում են գտնում բառերի բառաիմաստային տարբերակների իմաստաբանական խմբերի դասակարգման մեջ: Լեզվական միավորների համակարգային հարաբերությունների ուսումնասիրության հնարավոր ձևերից մեկը բառաիմաստային խմբերի դասակարգումն է, նրանց իմաստային կառուցվածքի և նրանց բառային բաղադրիչները կազմող կառուցվածքների տարբերակումը և նրանց միջև եղած կապերի վերլուծությունն է:

Լռության և հանգստի բառաիմաստային խմբում բայերի համախմբումը կատարվում է նախ և առաջ կարգային իմաստային բաղադրիչների հիման վրա, որոնք տվյալ բառաիմաստային խմբում հանդիսանում են գլխավոր, հիմնական: Վերոնշյալ բառաիմաստային խմբի կարգային (պարտադիր) իմաստային բաղադրիչ (իմակ) է հանդիսանում բայերի խնդրառությունն ու ոչ խնդրառությունը, իսկ տարբերակիչ իմակ են հանդիսանում հետևյալ բաղադրիչները՝ պատճառ, նպատակ, միջոց, ժամանակ, ձև, որոնք պարտադիր չէ, որ հանդիպեն լռության հասկացությունն արտահայտող բոլոր բայերում: Ռեսուսմասիրության ժամանակ նկատելի է նաև, որ ի տարբերություն այլ բառաիմաստային խմբերի, ինչպիսին, օրինակ, շարժում արտահայտող բայերի բառաիմաստային խումբն է, լռության խումբը սերտ կապի մեջ է շարժման, դադարի, ասացական բայերի հետ, որն էլ օգնում է ուսումնասիրելու և վերհանելու լռության բայերի իմաստային խմբերի ենթախմբերի դասակարգային և գծային կապերը:

Ռեսուսմասիրության նյութ են հանդիսացել լռություն և հանգիստ հասկացություններն արտահայտող մոտ 120 իմաստային տարբերակներ, որոնք դուրս են բերվել անգլերեն բացատրական բառարանից (Oxford Advanced Learner's Dictionary of English, 2006): Տվյալ բառարանի ընտրությունը պայմանավորված է այն փաստով, որ համեմատվել են երեք բառարաններ (Oxford Advanced Learner's Dictionary of English, 2006, Macmillan English Dictionary for Advanced Learners, London, 2006 և Websters-online-dictionary) և ուսումնասիրության ընթացքում նկատելի է դարձել, որ Oxford Advanced Learner's Dictionary of English 2006 բառարանը ավելի հստակ և մանրամասն է ներկայացնում բայերի իմաստները: Օրինակ՝

tiptoe 1. to walk using the front parts of your feet only, so that other people cannot hear you: *I tiptoed over to the window.* (Oxford Advanced Learner's Dictionary of Current English)

tiptoe 1. walk on one's toes (Websters-online-dictionary)

tiptoe 1. walk on your toes: *We tiptoed down the stairs.* (Macmillan English Dictionary for Advanced Learners)

shackle 2. [usually passive] to prevent sb from sneaking or behaving as they want (Oxford Advanced Learner's Dictionary of Current English)

shackle 1. to prevent sb from doing as they want (Macmillan English Dictionary for Advanced Learners)

Իսկ Websters-online-dictionary բառարանում *shackle* բայի տվյալ իմաստն ընդհանրապես բացակայում էր:

Ոչ խնդրառական բայերի խմբին են պատկանում այն բայերը, որոնցում արտահայտված գործողությունն ամփոփվում է սուբյեկտի մեջ, արտահայտվում է միայն սուբյեկտով: Խնդրառական բայերը չեն պահանջում և չունեն կոմպլեմենտար կապ օբյեկտի հետ և համարվում են իմաստաբանորեն ինքնուրույն: Ոչ խնդրառական բայերին հատուկ է մեղ իմաստային կառուցվածքը (1-2 բառաիմաստային տարբերակ):

Հարկ է մշել նաև, որ ուսումնասիրվող բառաիմաստային խմբում Ոչ խնդրառական բայերը փոքրաթիվ են, ըստ այդմ էլ ենթախմբերը նույնպես քիչ են: Իսկ խնդրառական բառաիմաստային տարբերակների քանակը շատ ավելին է, և հետևաբար խմբերն ավելի խիտ ու բազմաբանակ են: (Խնդրառական բայերի դասակարգումը կդառնա հետագա հետազոտության նյութ):

Եվ այսպես, կախված կողմնորոշիչից, ուսումնասիրվող բայերը բաժանվում են հետևյալ խմբերի՝ ըստ լռության տարբեր հատկանիշների.

1) Այս ենթախմբում ընդգրկված են բառաիմաստային տարբերակները, որտեղ առկա է "դադարել խոսել" իմույթը: Օրինակ՝

hush 1. (*used especially in orders*) to be quiet; to stop talking or crying: *Hush now and try to sleep.*

pause 1. to stop talking or doing sth for a short time before continuing: *Anita paused for a moment, then said: 'All right'.*

Տվյալ բառերի բառարանային նշանակության մեջ պարունակվող "to stop talking" կողմնորոշիչ ներկայությունը թույլ է տալիս *hush*(1) և *pause*(1) բառային տարբերակները դասել տվյալ ենթախմբին:

2) Հետաքրքիր է այն փաստը, որ ընդհանրապես լռություն և *հանգիստ* հասկացություններն արտահայտող բայերի բառարանային նշանակության մեջ չի նշվում լռության տևողությունը, բացառությամբ *to pause* բայի, որի բառաիմաստային տարբերակում նշվում է լռության ժամանակը:

pause 1. to stop talking or doing sth for a short time before continuing: *Anita paused for a moment, then said: 'All right'.*

Այստեղ “for a short time” կողմնորոշիչն է արտահայտում ժամանակը, և հատկանշական է նաև այն, որ այս բայի բառաիմաստային տարբերակում խոսքը գնում է կարճ ժամանակով լռության մասին, այնինչ ոչ մի լռության բայի բառաիմաստային տարբերակ չի նշում լռության երկարաժամկետությունը:

Դանգիստ հասկացությունն արտահայտող բայերի մեջ նույնպես առանձնացվել է ենթախումբ, որում ընդգրկված բայերի բառաիմաստային տարբերակում առկա է *for a short time* կողմնորոշիչը: Սակայն, հարկ է նշել այն փաստը, որ տվյալ բայերն արտահայտում են հանգստի մեկ տեսակ քնելը: Օրինակ՝

doze 1. to sleep [**sleep** 1. to rest with your eyes closed and your mind and body not active] *lightly for a short time*

nap 1. to sleep *for a short time, especially during the day*

Վերոնշյալ բայերի բառաիմաստային տարբերակներում առկա է “to sleep” կողմնորոշիչը, որն էլ իր հերթին պարունակում է “to rest” կողմնորոշիչը, որը հանգիստ հասկացությունն արտահայտող բայ է, և որն էլ թույլ է տալիս “to doze” և “to nap” բայերը դասել **հանգիստ** հասկացությունն արտահայտող բայերի շարքին: Իսկ “for a short time” կողմնորոշիչի օգնությամբ տվյալ բայերը դասվում են ժամանակի իմակը պարունակող բայերի նթախմբին:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև **oversleep** բային, որի բառաիմաստային տարբերակում նույնպես առկա է ժամանակի իմակը:

oversleep 1. to sleep longer than you intended: *I overslept and missed the bus.*

Այստեղ կրկին առկա է “to sleep” կողմնորոշիչը, իսկ “longer than you intended” կողմնորոշիչը ցույց է տալիս ժամանակի երկարաժամկետությունը, որն ավելին է, քան անհրաժեշտ է:

3) Ուսումնասիրության ընթացքում առանձնացվել է նաև ենթախումբ, որում ներառված բայերի բառարանային նշանակության մեջ առկա է “իրաժարվել խոսել” իմակը: Այդ բայերի օրինակ են հանդիսանում “to sulk”, “to forbear” և մի քանի այլ բայեր:

sulk 1. (disapproving) to refuse to speak or smile and look angry because you want people to know that you are upset about sth: *He went off to sulk in his room.*

forbear 1. (formal) to stop yourself from saying or doing sth that you could or would like to say or do: *He wanted to answer back, but he forbore from doing so. She forbore to ask any further questions.*

“To refuse to speak” և “to stop yourself from saying” կողմնորոշիչները, որոնք սահմանում են հետազոտված “to sulk” և “to forbear” բայերի իմաստները թույլ են տալիս տվյալ բայերը դասել այս ենթախմբին:

4) **Լռություն և հանգիստ** հասկացություններն արտահայտող բայերը, լինելով փոքրաթիվ, մեծ ազդեցություն ունեն այլ բայերի բառաիմաստային խմբերի իմաստների վրա, և տվյալ բայերը կկորցնեն իրենց նշանակությունն առանց **լռություն և հանգիստ** արտահայտող որևէ կողմնորոշի:

Առանձնացվել են շարժում ցույց տվող բայեր, որտեղ գործողությունը կատարում է լուռ, հանգիստ, անաղմուկ: Օրինակ՝

soft-shoe 2. to move somewhere very quietly, without attracting attention

tiptoe 1. to walk using the front parts of your feet only, so that other people cannot hear you: I tiptoed over to the window.

ghost 2. to move without making a sound: They ghosted up the smooth waters of the rivers.

To move, to walk իմակները, որոնք կարգային, հիմնական են վեչոնշյալ բայերի համար, վկայում են, որ նրանք պատկանում են շարժում ցույց տվող բայերի շարքին: Տվյալ բայերի բառարանային իմաստի մեջ պարունակվում են "without making a sound" և "quietly" կողմնորոշիչները, որոնց միջոցով էլ to ghost (2), to soft-shoe(2) և tiptoe(1) բայերը մտնում են վերոնշյալ խմբի մեջ: Հարկ է նշել, որ այստեղ **լռություն և հանգիստ** հասկացություններն արտահայտող կողմնորոշիչները հանդիսանում են տարբերակիչ (ոչ հիմնական) իմակներ:

5) Առանձնացվել է նաև ենթախումբ, որտեղ նշվում է լռության պատճառը: Այս ենթախմբում են ընդգրկվել to sulk(1), to hesitate (1), to stutter(1) բայերը:

sulk 1. (disapproving) to look angry and refuse to speak or smile because you want people to know that you are upset about sth: He went off to sulk in his room.

hesitate 1.~ (about/ over sth) to be slow to speak or act because you feel uncertain or nervous: She hesitated before replying.

Վերոնշյալ օրինակում առկա է *because* կողմնորոշիչը, որի օգնությամբ բացատրվում է լռության պատճառը, և որն էլ թույլ է տալիս to sulk, to hesitate և այլ բայեր դասել այս ենթախմբում:

Ոչ խնդրառական բայերի իմաստաբանական և շարահյուսական կարգավիճակի չհամընկնումը պայմանավորված է այլ տիպի բառային ձևությամբի առկայությամբ, որոնց նշանակություններն ունեն երկու ուղղվածություն՝ խնդրառական և ոչ խնդրառական: Ավելի մեղ ուսումնասիրությամբ առանձնացվել է մի բայախումբ, որտեղ միևնույն բառաիմաստային տարբերակում առկա են և՛ խնդրառական և՛ ոչ խնդրառական հատկանիշները: Այս բայերի խմբին են դասվում quiet (1), quieten(1), still(1), choke(3) և այլ բայեր: Օրինակ՝

quiet 1. to become calmer or less noisy; to make sb/sth calmer or less noisy: The demonstrators quieted down when the police arrived. He's very good at quieting the kids.

still 1. to become calm and quiet; to make sth calm and quiet: The wind stilled. [VN] She spoke quietly to still the frightened child

choke 1. to be unable to speak normally especially because of strong emotion; to make sb feel too emotional to speak normally: *His voice was choking with rage. Despair choked her words.*

"To become calmer or less noisy" և "to be unable to speak" կողմնորոշիչները արտահայտում են վերոնշյալ բայերի ոչ խնդրառությունը, այսինքն՝ նրանցում ամփոփված գործողությունն արտահայտվում է միայն սուբյեկտով, իսկ *sb/sth* բառերն արդեն վկայում են այն մասին, որ գործողությունն ուղղված է է իմաստաբանական օբյեկտի վրա:

Լռություն և *հանգիստ* հասկացություններին ուղղակիորեն կապակցված և միահյուսված են՝ միաժամանակ յուրաքանչյուրն ունենալով իր առանձնահատուկ իմաստները: Ուսումնասիրելով վերոնշյալ երկու հասկացությունները՝ կարելի է գալ այն եզրակացության, որ *հանգիստ* հասկացությունն արտահայտող բայերը պարունակում են լռության տարր, այնինչ *լռություն* հասկացությունն ավելի շատ առկա է շարժման, զարմանքի և նույնիսկ ասացական որոշ բայերի բառաիմաստային տարբերակներում, որն էլ ավելի բազմերանգ է դարձնում տվյալ բայախմբի ստորակարգային դասակարգումը:

Ուսումնասիրության ընթացքում նկատելի է դարձել, որ *լռություն* և *հանգիստ* հասկացություններն արտահայտող իմակների քանակը, լինելով փոքրաթիվ և կազմելով առանձին դասակարգում, զգալիորեն ազդում է բառաիմաստային այլ խմբերի բայերի վրա՝ հստակեցնելով և որոշակիորեն փոփոխելով նրանց իմաստը: Լռության և հանգստի բայերի իմաստային խումբը մի բարդ ու միահյուսված համակարգ է, որի անդամների միջև եղած տարատեսակ հարաբերությունները և նրանց կապն ու դերը այլ իմաստային խմբերում արժանի են խոր ուսումնասիրության:

1. Александрова И. Б. Слово о молчании// Русская речь.-2005.-№4.
2. Богданов В.В. Функции вербальных и невербальных компонентов в речевом общении // Языковое общение: Единицы и регулятивы: Межвузовский сб. науч. тр.- Калинин: Изд-во Калинин. ун-та, 1987
3. Котельников В.А., "Покой" в религиозно-философских и художественных контекстах// "Русская литература", 1994
4. Крестинский С. В., Коммуникативно-прагматическая структура акта молчания// Коммуникативно-функциональный аспект языковых единиц. Тверь, 1993
5. "Macmillan English Dictionary for Advanced Learners" by M. Rundell, London, 2006
6. "Oxford Advanced Learner's Dictionary of Current English" by A. S. Hornby, 7th edition, Oxford, 2006
7. <http://www.websters-online-dictionary.org/definition>
<http://www.google.com/gwt/x?q=Genesis+1%3A2-10&channel=new&resnum>